

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ «ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐՏԻԳԱՆԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՅՕ-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

«ԳԱԼՈՒՍՏ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԴՈԿՏ. ԱԶԵՐԵՏՈ ՊԵՐՏԻԿԱՆԻՆ
ԱԶՆՈՒԱՍԻՐՏ ԲԱՐԵՐԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Լիսաբոն—Պորտուգալիա

Ուղիղ երեսուն տարիներ առաջ Յուլիս ամսի վերջերին Լիսաբոնում իր աչքերը յաւէտ փակեց Գալուստ Կիւլպէնկեանը և անցաւ կեանքի միւս ափը աստուածային նախախնամութեամբ, իր ետևից թողնելով պայծառ յիշատակ:

Գալուստ Կիւլպէնկեան, հարազատ զաւակը Հայ Եկեղեցու, իր առաքինի կեանքով ու իր մեծագործութիւններով հանդիսացաւ պարծանքը մեր ժողովրդի: Իր կեանքի ամբողջ վաստակով նա հիմնեց իր անունը կրող բարեսիրական այն մեծ Հիմնարկութիւնը, որ լոյս ու բարիք է բաշխում մեր օրերում՝ բազում երկրներում, բազում եկեղեցական, մշակութային, կրթական հաստատութիւնների:

Երախտապարտ սրտով ոգեկոչում ենք անմոռանալի յիշատակը լուսաբնակ Գալուստ Կիւլպէնկեանի և աղօթում սրտեռանդ, որ Տէրը յաւէտ պայծառ պահի նրա հոգին երկնից արքայութեան մէջ:

Գալուստ Կիւլպէնկեան մահկանացու ծնուեց, բայց իր մարդասիրական մեծ իրագործումներով ժառանգորդ դարձաւ անմահութեան: Օրհնութիւն նրա վաստակին, օրհնութիւն նրա յիշատակին, օրհնութիւն նրա կեանքի կոչած հիմնարկութեան:

Օրհնութիւն նաև Ձեզ, մեծայարգ Տիար նախագահ, և Ձեր բոլոր ղեկավար գործակիցներին, որ տիւ և գիշեր Ձեր աշխատանքով ամէն ջանք ի գործ էք դնում ազնիւ հոգատարութեամբ յիրագործումն հանգուցեալի կտակի նախատեսութիւնների:

Խորապէս երախտապարտ ենք Ձեզ և Տիար Ռոբերտ Կիւլպէնկեանին, որ Հիմնարկութեանդ հոգատար առատաբաշխ ձեռքը տարածւում է նաև Հայաստանեայց Առաքելական մեր Եկեղեցու վրայ Հայաստանում և հայ սփիւռքում:

Այս հանդիսաւոր պահին Սուրբ Էջմիածնից, պատմական կենտրոնը Հայ Եկեղեցու, հաճեցէք ընդունել Մեր ջերմագին գնահատանքը և շնորհակալութիւնը: Թող Աստուած միշտ անսասան, անշարժ ու բարգաւաճ պահպանի «Գալուստ Կիւլպէնկեան» հաստատութիւնը և Ձեզ պարգևի մշտանորոգ եռանդ ու կենաց ևս երկար տարիներ՝ շարունակելու Ձեր քրիստոսանուէր առաքելութիւնը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 3 Յուլիսի
1985 Փրկչական ամի.
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնէ
Հմր. 1359